

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը քաղաք Մանիլա (Ֆիլիպիններ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Մարիամ Մանուկյան - ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետի տեղակալ

Նորայր Մուղդուսյան - ՀՀ ՊԵԿ Համալիր հարկային ստուգումների վարչության ստուգումների թիվ 6 բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆիլիպիններ, ք. Մանիլա, սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը

3. Հրավիրող կողմը՝

Ասիական զարգացման բանկ (ADB)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Դասընթացը նախատեսված էր մասնակիցներին ներկայացնել ածխածնային հարկի կիրառման արդյունավետ մեխանիզմներին վերաբերող հիմնական թեմաները: Դասընթացին մասնակցությունը հնարավորություն է տվել ուսումնասիրելու ածխածնային հարկմանը վերաբերող հարցերը և վերջինիս կիրառման հետ կապված հիմնական խնդիրները, դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ միջազգային փորձը: Մասնավորապես, քննարկվեցին ածխածնային հարկի հիմնական սկզբունքները, ներառյալ գլոբալ հեռանկարները և համեմատությունները արտանետումների առևտրի համակարգերի և այլ գործիքների հետ, վերջիններիս կիրառումը՝ կենտրոնանալով ներքին եկամուտների մոբիլիզացիան ուժեղացնելու, հարկաբյուջետային քաղաքականության շրջանակներում ինտեգրելու և ածխածնային հարկի ներդրման (մշակման) վրա, որոնք համահունչ են ազգային նպատակներին:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները՝

- ածխածնային հարկի սկզբունքները և նպատակները, դրա կիրառմանն միջազգային փորձը, ածխածնի հարկերի և արտանետումների առևտրի համակարգերի և այլ գործիքների միջև տարբերությունը,

- ածխածնային հարկի ներդրման հիմնական մարտահրավերները (ածխածնային հարկի գծով հարկային վարչարարության հմտությունների և գիտելիքների զարգացում, հարկային վարչարարության լավագույն փորձը և իրավիճակների ուսումնասիրությունները),

- տնտեսական և սոցիալական ազդեցությունները (ածխածնային հարկերի տնտեսական հետևանքների գնահատում, սոցիալական անբարենպաստ ազդեցությունների մեղմացման ռազմավարություններ):

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում Նորվեգիայի և Շվեդիայի հարկային մարմինների ներկայացուցիչները ներկայացրել են ածխածնային հարկի հիմնական սկզբունքները և նպատակները, դրա կիրառմանն միջազգային փորձը, արտաքին ազդեցությունները որպես հիմնական խնդիր, ածխածնի հարկերի և արտանետումների առևտրի համակարգերի և այլ գործիքների միջև տարբերությունը: Դասընթացի ընթացքում հանդես են եկել նաև Ասիական զարգացման բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության փորձագետները՝ ներկայացնելով կլիմայի փոփոխությունների ֆիսկալ ռիսկերը և դրանց կառավարումը, ինչպես նաև ածխածնային հարկի մշակման հիմնական սկզբունքները, ածխածնային հարկի ներդրման հիմնական մարտահրավերները (ածխածնային հարկի գծով հարկային վարչարարության հմտությունների և գիտելիքների զարգացում, լավագույն փորձը և իրավիճակների ուսումնասիրությունները):

Դասընթացը անցկացվել է ինտերակտիվ, և մասնակից երկրների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ներկայացնել իրենց տեսակետները և փորձը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացը չէր ենթադրում որոշումների ընդունում կամ փաստաթղթերի ստորագրում:


8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Դասընթացին մասնակցությունը հնարավորություն տվեց ծանոթանալ ածխածնային հարկի կիրառման արդյունավետ մեխանիզմներին, դրա ներդրման հետ կապված հիմնական մարտահրավերներին, ընթացիկ միտումներին, առաջացող խնդիրներին և վերջիններիս ուղղությամբ առաջարկվող լուծումներին:


Միջոցառմանը մասնակցությունը նաև փորձի փոխանակման և ոլորտի օտարերկրյա գործընկերների, փորձագետների հետ կապեր հաստատելու հնարավորությունն ընձեռեց:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիամ Մանուկյան



Նորայր Մուղդուսյան



09.10.2024թ.